

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
«ԱՎՏՈՄՈՔԻԼՆԵՐ ԵՎ ՏՐԱԿՏՈՐՆԵՐ» ԱՄԲԻՈՆ

**ՄՏՁ-80.1 ԵՎ ՄՏՁ-82.1/82.2 ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ԵՐԵՎԱՆ
ՀԱԱՀ
2015

ՀՏԴ 631.372 (072)

ԳՄԴ 40.721

Ս 550

Աշխատանքը հավանության է արժանացել գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կողմից (16.01.2015 թ., արձանագրություն 4):

Խմբագիր՝ Ա.ՄՄՐՅԱՆ

Սիրեկանյան Ա.Ռ.

Ս 550

ՄՏՁ-80.1 և ՄՏՁ-82.1/82.2 տրակտորների շահագործման և կարգավորման կանոններ: Մեթոդական ցուցումներ գործնական պարապմունքներ անցկացնելու համար / Ա.Ռ. Սիրեկանյան. -Եր.: ՀԱԱՐ, 2015 - 40 էջ:

Աշխատանքը նախատեսված է «Գյուղատնտեսության մեքենայացում» «Մեքենաներ և սարքավորումներ», «Կենսագործունեության անվտանգություն» մասնագիտությունների ուսանողների համար:

Մեթոդական ցուցումներում տրված են ՄՏՁ-80.1 և ՄՏՁ-82.1/82.2 տրակտորների շահագործման և կարգավորումների կարգը:

ՀՏԴ 631.372 (072)

ԳՄԴ 40.721

ISBN 978 – 9939 – 54 – 819 – 7

© Սիրեկանյան Ա.Ռ., 2015

© Հայաստանի ազգային ազրարային համալսարան, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
ՇԱՀԱԳՈՐՇՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ	4
1. ՏՐԱԿՏՈՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ	4
2. ԴԻՁԵԼԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԻՑ ԱՌԱՋ ԱՆՅՐԱԺԵՇՏ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱ-	5
ԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ.....	5
3. Դ-243 ԴԻՁԵԼԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ	5
4. ՏՐԱԿՏՈՐԻ ՏԵՂԻՑ ՊՈԿՈՒՄՆ ՈՒ ՇԱՐԺՈՒՄԸ	6
5. ՈՒՎԵՐՍ - ՈՒԵՂՈՒԿՏՈՐԻ ԴԵԿԱՎԱՐՈՒՄԸ	8
6. ՏՐԱԿՏՈՐԻ ԿԱՆԳԱՌԸ	8
7. ԴԻՁԵԼԻ ԿԱՆԳԱՌԸ	9
8. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԵՏ ՏՐԱԿՏՈՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ.....	9
8.1. Տրակտորի աշխատանքի նախապատրաստումը՝ կախված դրա հետ ագրեգատավորվող գյուղատնտեսական մեքենաների տեսակից (տիպից):	9
8.2.Տրակտորի անվադուրի լայնության կարգավորումը	10
8.3. Պննմատիկ դողերի շահագործումը	20
8.4. Կշռային սահմանափակումներ	22
8.5. Տրակտորի վրա գյուղատնտեսական մեքենաների կախումը: Կախոցային սարքի կարգավորումը աշխատանքային և տրանսպորտային դիրքերի համար.....	23
8.6. Հիդրոհամակարգի և կախման սարքի ղեկավարումը հիդրոբաժանարարի կիրառմամբ	27
8.7. Կախման սարքի ղեկավարումը ուժային (դիրքային) կարգավորիչի կիրառմամբ	27
8.8. Ուժային (դիրքային) կարգավորիչի կարգավորումը	32
8.10. Կցորդների և կցվող մեքենաների հետ աշխատանքը.....	37
8.11. Հսկողությունը տրակտորի աշխատանքի ժամանակ	38

Ներածություն

Մեքենատրակտորային պարկի աշխատանքի հուսալիությունը, երկարակեցությունը և արդյունավետությունը պայմանավորված են շահագործման ընթացքում դրանց ճիշտ և գրագետ օգտագործմամբ, իսկ վերջիններս հնարավոր են միայն շահագործվող տեխնիկայի ընդհանուր կառուցվածքի, բաղկացուցիչ ագրեգատների, հանգույցների ու մեխանիզմների աշխատանքի սկզբունքի և տեխնիկական բնութագրերի իմացությամբ և շահագործման կանոնների ու տեխնիկական սպասարկումների պարտադիր կատարմամբ:

Սույն մեթոդական ցուցումներում բերված են «БЕЛАРУС» ՄՏՁ 80.1 և ՄՏՁ 82.1/82.2 տրակտորների շահագործման և կարգավորումների կանոնները: Այս տրակտորները պատկանում են ունիվերսալ-շարահերկ տրակտորների խմբին, որոնք նախատեսված են շարահերկ (թմբամիջավոր) կուլտուրաների մշակման մեքենայացման համար:

Դիտարկվող տրակտորները 14 կՆ դասի են և օգտագործվում են բանջարեղենի և տեխնիկական կուլտուրաների բերքահավաքի, ինչպես նաև դրանց մշակման, վարի, ցաքանման և փոցխման, կուլտիվացիայի, ցանքի և մի շարք այլ գործողությունների համար: Կիրառվում են տարբեր նշանակության գյուղատնտեսական մեքենաների և գործիքների հետ ագրեգատավորված:

Ցուցումները նախատեսված են ուսանողների հետ գործնական պարապմունքների անցկացման համար: Ցուցումները պիտանի են նաև շահագործող օպերատորների ու ինժեներատեխնիկական անձնակազմի համար:

Նախքան տրակտորը շահագործման մեջ դնելը, անհրաժեշտ է ուսումնասիրել ներկայիս ցուցումները և անշեղորեն իրականացնել բերված երաշխավորումները:

ՇԱՅԱԳՈՐՇՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. ՏՐԱԿՏՈՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ

Նոր տրակտորի գործադրումից առաջ կատարեք հետևյալ աշխատանքները.

- լվացեք տրակտորը,
- ստուգեք ակունոլյատորային մարտկոցները և անհրաժեշտության դեպքում բերեք դրանք աշխատանքային վիճակի,
- տեղակայեք ռադիատորի և գլանների բլոկի արտաթողման ծորակները, որոնք հավելված են տրակտորին և գտնվում են փաթեցման արկղում,
- ստուգեք յուղի որակն ու մակարդակը դիզելի կարտերում, օդազտիչի տակնոցում, ուժային փոխանցման, առջևի տանող կամրջակի և միջանկյալ հենարանի, գործարկիչ շարժիչի ռեդուկտորի իրաններում, ինչպես նաև հիդրոկախոցային համակարգի բաքում, ղեկի վարման ուժեղարարի իրանում և անհրաժեշտության դեպքում հավելալցրեք կամ փոխարինեք այն,
- ըստ յուղման աղյուսակի՝ յուղեք տրակտորի մեխանիզմներն ու հանգույցները,
- լիցքավորեք վառելանյութի բաքը առնվազն 48 ժամերի ընթացքում տղմագտված/զուլալված ամառային կամ ձմեռային դիզելային վառելանյութով,
- լիցքավորեք շարժիչի հովացման համակարգը հովացնող հեղուկով մինչև լիցքավորման բկանցքի վերին ճակատից 50-60 մմ ցածր մակարդակը,

ԿԱՐԵՎՈՐ Է: Շահագործման ընթացքում թույլ չտալ հովացնող հեղուկի մակարդակի իջեցում լիցքավորման բկանցքի վերին ճակատից 100 մմ-ից ավելի չափով:

- ստուգեք օդի ճնշումը անվադողերում,
- տրանսպորտային աշխատանքներում օգտագործման դեպքում տրակտորի անվադուրը մեծացրեք մինչև 1800 մմ-ից ոչ պակաս չափը,
- հանեք առջևի անվաթևերը 1350-1450 մմ առջևի կամրջակի անվադուրով աշխատելիս:

2. ԴԻՁԵԼԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԻՑ ԱՌԱՋ ԱՆՂՐԱԺԵՇՏ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱ- ԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ

Նոր կամ երկար ժամանակ չաշխատած դիզելի գործարկումից առաջ իրականացրեք հետևյալ գործողությունները.

1. կատարեք հերթափոխային տեխնիկական սպասարկում,
2. համոզվեք, որ վառելանյութի բաքերի ծորակները բաց են,
3. դիզելի վառելիքային համակարգը ամբողջապես լցրեք վառելանյութով՝ 2-3 պտույտով ետ պտուտակեք վառելանյութի նուրբ զտման գտիչի փչամաքրման անցքը խլացնող հեղույսը, ձեռքի ենթամղիչ պոմպով մղեք վառելանյութը այնքան ժամանակ, մինչև խլացնող հեղույսի գլխիկի տակից արտահոսող վառելանյութի շիթի մեջ չեն նշմարվի օդի պղպջակներ, որից հետո պտուտակելով տեղը հագցրեք խլացնող հեղույսը;
4. համոզվեք, որ դիզելի հովացման համակարգը լիցքավորված է,
5. փակեք հովացման համակարգի ռադիատորի փականակը (աօրոկա),
6. տեղակայեք փոխանցումների տուփի դեկավարման լծակը փոխանցումների I կամ II լայնքաչափի միացման դիրքում, անջատեք հզորության անջատման լիսեռի հաղորդակը;
7. միջավայրի $+5^{\circ}\text{C}$ և ավելի ցածր ջերմաստիճանների դեպքում ձմեռային դիզելային վառելանյութով լիցքավորեք էլեկտրաջա-
հաբոցային տաքացուցիչի բաքը:

3. Գ-243 ԴԻՁԵԼԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ

Համոզվեք, որ փոխանցումների տուփի դեկավարման լծակը գտնվում է ծայրագույն դիրքում (փոխանցումների լայնքաչափի միացման դիրքում):

Դիզելի գործարկումն իրականացրեք հետևյալ հաջորդականությամբ.

1. վառելանյութի մատուցման դեկավարման լծակը տեղակայեք առավելագույն մատուցման դիրքում,
2. միացրեք «մասսա» անջատիչը,
3. սարքավորումների վահանակի վրա տեղակայված մեկնարկիչի անջատիչի 31 (նկ. 1ա) բանալին պտտեք մինչև դիրք I (սարքավորումների սնուցում), (կմիանա զուները, եթե այն տեղա-
կայված է տրակտորի վրա, որը ազդանշանում է դիզելի յուղման համակարգում յուղի ճնշման բացակայության մասին) և 6 անջա-

տիչով միացրեք էլեկտրաջահաբոցային տաքացուցիչի շիկացման պարուրակը (այդ ժամանակ էլեկտրական տախտարագաչափով սարքավորումների վահանակի վրա կվառվի հսկման լամպը),

4. երբ հսկման լամպը անցնում է թարթող ռեժիմ, ինչը հուշում է գործարկման պատրաստականության մասին, բաց չթողնելով 6 անջատիչի ստեղնը՝ անջատեք կցորդման ագույցը և մեկնարկիչի 31 բանալիի պտույտով դեպի դիրք II միացրեք մեկնարկիչը և գործադրեք դիզելը:

Դիզելի գործարկումից հետո, դրա կայուն աշխատանքի դեպքում, բաց թողեք 6 անջատիչի ստեղնը, մեկնարկիչի անջատիչի 31 բանալին և կցորդման ագույցի ոտնակը:

Մեկնարկիչի անընդհատ աշխատանքի տևողությունը չպետք է գերազանցի 10 վայրկյանը, իսկ գործարկման ընթացքում դիզելի գլաններում առանձին բռնկումների առաջացման դեպքում՝ 20 վայրկյանը:

Եթե մեկ անգամից դիզելը չի գործարկվում, կրկնեք 3 և 4 կետերում բերված գործարկման գործընթացը:

Թույլատրվում է 1-1,5 րոպեից ոչ պակաս ընդմիջումներով մեկնարկիչի երեքից ոչ ավել հաջորդական միացումներ: Եթե այսքանից հետո դիզելը չի գործարկվում, պարզեք պատճառը և վերացրեք այն:

Կարճաժամկետ կանգառներից հետո դեռևս տաք դիզելը կարելի է գործարկել առանց նկարագրված նախապատրաստական գործողությունների կրկնման՝ միայն մեկնարկիչի անջատիչի 31 բանալին մինչև դիրք II պտտելով:

5. գործարկումից հետո ստուգեք դիզելի աշխատանքը ծնկավոր լիսեռի ցածր և միջին պտուտաթվերով պարապ ընթացքով աշխատելիս: Սահուն կերպով բարձրացրեք և իջեցրեք ծնկավոր լիսեռի պտտման հաճախությունը վառելանյութի մատուցման ղեկավարման լծակի տեղափոխությունների միջոցով: Դիզելը պետք է աշխատի հավասարաչափ, առանց թխթխկոցների,

6. դիզելը բեռնավորեք միայն դրա տաքացումից հետո: Դիզելը տաքացած է և շահագործմանը պատրաստված հովացնող հեղուկի 50 °C-ից ոչ պակաս ջերմաստիճանի դեպքում: 15 րոպեից ավել պարապ ընթացքով դիզելի աշխատանքը ցանկալի չէ:

4. ՏՐԱԿՏՈՐԻ ՏԵՂԻՑ ՊՈԿՈՒՄՆ ՈՒ ՇԱՐժՈՒՄԸ

Տրակտորը տեղից շարժելու համար կատարեք հետևյալը.

1. տեղակայեք դիզելի ծնկավոր լիսեռի պտտման նվազագույն հաճախություն,
2. մինչև վերջ սեղմեք կցորդման ագույցի անջատման ոտնակը, որոշ ժամանակ սպասեք (որպեսզի կանգ առնեն կցորդման ագույցի պտտվող մեքենամասերը) և սահուն, առանց ձգումների միացրեք պահանջվող փոխանցումը (արագությունների լայնքաչափի ու փոխանցումների համարների սխեմայով ցուցանակը ամրացված է տրակտորիստի խցիկի աջ կողմում),
3. անջատեք կայանման արգելակը և սահուն կերպով բաց թողեք կցորդման ոտնակը՝ միաճամանակ ավելացնելով ծնկավոր լիսեռի պտտման հաճախականությունը:

ԿԱՐԵՎՈՐ Է: Շարժման ուղղության փոփոխման դեպքում փոխանցումների փոփոխությունը իրականացնել միայն տրակտորի կանգառից հետո: Տրակտորի աշխատանքի ընթացքում ոտքը մի պահեք կցորդման ագույցի ոտնակի վրա, այն կարող է կցորդիչի սկավառակների տեղապտույտի պատճառ դառնալ, ինչը կբերի մեքենամասերի գերտաքացման և խափանման:

Կտրուկ շրջադարձերն իրականացրեք միայն ցածր արագությունների վրա և առանց տրակտորի բեռնավորման: Կտրուկ շրջադարձերի ժամանակ թույլատրվում է դանդաղավազ անվի ենթաարգելակում:


Աշխատանքից առաջ, շահագործման պայմաններից կախված, առջևի տանող կամրջակով տրակտորի բաժանարար տուփի ղեկավարման լծակը տեղադրեք միջին («առջևի տանող կամրջակը գործադրվում է ավտոմատաբար») կամ ծայրային առջևի դիրքում («առջևի տանող կամրջակը անջատված է») կոշտ ծածկույթով ճանապարհների վրա տրանսպորտային աշխատանքներ իրականացնելիս, ծայրային հետին դիրքում («առջևի տանող կամրջակը միացված է հարկադրաբար»)՝ երկարաժամկետ - փխրուն և խոնավ հողերի վրա աշխատելիս, կարճաժամկետ – մեծ քարշային դինադրությունների և ճանապարհային արգելքների հաղթահարման, առաջընթացով կամ հետընթացով տեղից պոկման ժամանակ:

5. ՌԵՎԵՐՍ - ՌԵԴՈՒԿՏՈՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Ռեվերս-ռեդուկտորի ղեկավարման լծակը (32a, նկ. 1) տեղակայվում է հետևյալ դիրքերում՝ «Ռեվերս» (ռեվերսը միացված է) – ծայրային հետին, «Առաջընթաց» (ռեվերսը անջատված է):

Տրակտորի շարժման ուղղության փոփոխման համար.

1. սեղմեք կցորդման անջատման ոտնակը,
2. առանց փոխանցումների տուփի և ռեվերս-ռեդուկտորի անջատման՝ կանգնեցրեք տրակտորը, անհրաժեշտության դեպքում կիրառեք արգելակում,
3. բաց չթողնելով կցորդման ոտնակը՝ ռեվերս-ռեդուկտորի լծակը «Առաջընթաց» դիրքից փոխադրեք «Ռեվերս» դիրք կամ հակառակը,
4. սահուն կերպով բաց թողեք կցորդման ոտնակը:



Նկ. 1. Ռեվերս-ռեդուկտորի ղեկավարումը:

ԿԱՐԵՎՈՐ Է: Ռեվերս-ռեդուկտորի ղեկավարման լծակի տեղափոխումները իրականացնել միայն անջատված կցորդման ագույցի և կանգնած տրակտորի դեպքում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ռեվերս-ռեդուկտորի ղեկավարման լծակը երբեք չթողնել «Առաջընթաց» և «Ռեվերս» դիրքերի միջև:

6. ՏՐԱԿՏՈՐԻ ԿԱՆԳԱՈՐԸ

Տրակտորի կանգնեցման համար՝

1. փոքրացրեք ծնկավոր լիսեռի պտտման հաճախությունը,
2. սեղմեք կցորդման անջատման ոտնակը,
3. տեղակայեք փոխանցումների տուփի ղեկավարման լծակը չեզոք դիրքում,

4. արգելակեք տրակտորը կայանման արգելակով: Տրակտորի արագ (անհետաձգելի) կանգառման համար մինչև վերջ սեղմեք կցորդման և աշխատանքային երկու արգելակների ոտնակները:
2ի թույլատրվում տրակտորը կանգնեցնել արգելակմամբ առանց կցորդման ագույցի անջատման:

7. ԴԻՉԵԼԻ ԿԱՆԳԱՌԸ

Դիզելի կանգառման համար`

1. բռնաթափումից հետո թողեք որոշ ժամանակ դիզելն աշխատի ծնկավոր լիսեռի փոքր պտուտաթվերով` շարժիչի ջերմաստիճանի իջեցման համար: Խորհուրդ չի տրվում դիզելն անջատել դրա բարձր ջերմաստրճանների պայմաններում,
 2. վառելանյութի մատուցման ղեկավարման բռնակով տեղակայեք դիզելի պարապ ընթացքի նվազագույն պտուտաթվերը (ծայրային հետին դիրք),
 3. դիզելը հանգրեք կանգառման բռնակով` այն մինչև վերջ ձգելով դեպի ձեզ,
 4. անջատեք «մասսա» անջատիչը:
Մի անջատեք դիզելը.
- ա) վառելիքի բաքի ծորակի փակմամբ, ինչը վառելանյութով սնման համակարգի մեջ օդի թափանցման պատճառ կարող է դառնալ, որը կդժվարացնի դիզելի հետագա գործարկումը,
- բ) վթարային կանգառման բռնակով, եթե իրավիճակը վթարային չէ:

8. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԵՏ ՏՐԱԿՏՈՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ

8.1. Տրակտորի աշխատանքի նախապատրաստումը` կախված դրա հետ ագրեգատավորվող գյուղատնտեսական մեքենաների տեսակից (տիպից):

Կախված պահանջվող աշխատանքի տեսակից տրակտորը ագրեգատավորեք այն տեխնիկական միջոցներով (գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ, տրանսպորտային և ուրիշ մեքենաներ), որոնք համաձայն դրանց շահագործման հրահանգի նախատեսված են 14 կև դասի «Беларус» տրակտորի հետ ագրեգատավորման համար, և աշխատանքային ու տրանսպորտային արագությունների, անվադուրի լայնության, անվադողերում օդի ճնշման և ուրիշ պարամետրերի


ընտրության հարցում ղեկավարվեք դրանց ինստրուկցիաների երաշխավորումներով:

8.2. Տրակտորի անվաղուրի լայնության կարգավորումը

8.2.1. Առանց հիդրոզևանի ղեկային հաղորդակում (ղեկի վարման հիդրոուժեղարարով կահվորված տրակտոր)

ՄՏՁ-80.1 տրակտորի առջևի անիվների անվաղուրը կարող է փոփոխվել 1350-ից մինչև 1850 մմ միջակայքում, հետևի անիվներին՝ 1400-ից մինչև 1600 մմ և 1800-ից մինչև 2100 մմ:


ՄՏՁ-80.1 տրակտորի առջևի անիվների անվաղուրը կարող է կարգավորվել 100 մմ քայլով՝ անիվների սիմետրիկ դասավորության դեպքում, և 50 մմ քայլով՝ անիվների ոչ սիմետրիկ դասավորության դեպքում: Ուղղատու անիվների անվաղուրի պահանջվող լայնության տեղակայման համար կատարեք հետևյալ գործողությունները (նկ. 2).



Նկ. 2.

1. դռնկրատով բարձրացրեք տրակտորի առջևի մասն այնպես, որ անիվները կտրվեն գետնից,
2. թուլացրեք (1) հեղույսների ձգվածքը, հանեք առջևի կամրջակի թևքերի և շարժական բռունցքների ամրակապող (2) մատները,
3. տեղափոխեք նախ մեկ, իսկ հետո նաև մյուս շարժական բռունցքները (միաժամանակ փոխեք նաև ղեկային լծակների երկարությունները՝ պտտելով (3) խողովակները (5) ծայրադիրների վրա՝ նախապես ետ պտուտակելով (4) հակամանեկները) տեղակայվող անվաղուրի լայնությանը համապատասխանող չափով, որից հետո ամրացրեք բռունցքները առջևի կամրջակի թևքերում,
4. իջեցրեք տրակտորը դռնկրատից: Ստուգեք և անհրաժեշտության դեպքում կարգավորեք անիվների զուգամիտումը:

Առջևի տանող կամրջակում կոնական ռեդուկտորով կահավորված ՄՏՁ-82.1 տրակտորների առջևի անիվների աղուրը կարգավորվում է կամրջակի թևերի վրա տեղակայված պարույրավոր մեխանիզմով (Նկ. 3)՝ անաստիճան ձևով: Աղուրի կարգավորումը հնարավոր է իրականացնել երեք միջակայքերում՝ 1350-1500 մմ, 1500-1600 մմ, 1600-1800 մմ (Նկ. 4):




Նկ. 3.

Անվաղուրի պահանջվող լայնությունը ստանալու համար տեղակայեք անվագոտին սկավառակի նկատմամբ այնպես, ինչպես ցույց է տրված Նկ. 4-ի վրա:

Սկավառակի հաստատուն (անփոփոխ) թռիչքով անիվների դեպքում անվաղուրը կարգավորվում է միայն 1400-1700 մմ միջակայքում՝ անաստիճան ձևով:

Անվաղուրի փոփոխման համար բարձրացրեք տրակտորի առջևի մասը (կամ հաջորդաբար առջևի անիվները)՝ ապահովելով լուսածերպը անիվների և գետնի միջև, արգելակեք հետևի անիվները, որից հետո (Նկ. 3).



Նկ. 4.


1. ետ քանդեք հեղույսները և հանեք (2) կափարիչը,
2. ետ քանդեք մանեկները և ազատեք թևքերի (3) սեպերն այնպես, որ ապահովվի կոնական զույգերի իրանների ազատ տեղաշարժը,
3. Բանալիով կարգավորման (1) վիճակի պտտումով իրականացրեք կամրջակի թևքերի մեջ անիվների հետ կողային ռեդուկտորների տեղափոխությունն ու նշված միջակայքերում պահանջվող չափի աղուրի տեղակայումը: Կարգավորման վիճակի պտտումը պետք է ուղեկցվի ղեկային ձգաձողերի երկարության փոփոխմամբ: Աղուրի պահանջվող չափի տեղակայումից հետո կարգավորեք առջևի անիվների զուգամիտումը:

Ա. Հիդրոզևանով ղեկային հաղորդակում

Հիդրոզևանի վերադասավորումը աղուրի կարգավորման ժամանակ

Անիվների աջ-ձախ դարձերի հավասար անկյունների ապահովման համար պետք է պահպանվի համապատասխանությունը բարձակի անցքերում հիդրոզևանի կոնական մատի տեղակայման և ուղղատու անիվների ռեդուկտորների դուրսձգման չափի միջև: **Ա. Ղեկի վարման հիդրոզևանի տեղակայումը առջևի տարվող կամրջակի վրա (նկ. 5)**

Շրջադարձային բռունցքների դուրսձգումը և հիդրոզևանի վերադասավորումը կատարվում է աստիճանային եղանակով՝ 50 մմ քայլով:



Նկ. 5.


I անցքի մեջ հիդրոզևանի կոնական մատի տեղադրման դեպքում $A_{\text{ձախ}}$ չափը (հեռավորությունը հեծանի ճակատից մինչև բռունցքը) պետք

է կազմի 105 մմ, II անցքի մեջ մատի տեղադրման դեպքում՝ 155 մմ, III անցքի մեջ մատի տեղադրման դեպքում՝ 205 մմ, IV անցքի մեջ մատի տեղադրման դեպքում՝ 255 մմ:


Բարձակի համապատասխան անցքերում հիդրոզլանի կոնական մատի տեղադրումից հետո անհրաժեշտ է կարգավորել անիվների զուգամիտումը:

Առջևի անիվների աղուրի տեղակայման համար՝

1. արգելակեք տրակտորը կանգառային արգելակով: Հետևի անիվների առաջից և հետևից տեղակայեք հեմակներ,
2. տեղակայեք դոմկրատը առջևի կամրջակի թևքերից մեկի տակ և բարձրացրեք մինչև անիվի գետնից կտրվելը,
3. թուլացրեք առձգման հեղույսների (1) մանեկները (նկ. 6), հանեք արտաշարժ բռունցքը սևեռող մատը (2), թուլացրեք ղեկային ձգածողի (5) խողովակի ծայրերում տեղակայված (4) մանեկների ձգվածքը,
4. անջատեք (8) (նկ. 7) հիդրոզլանը (7) բարձակից,
5. տեղափոխեք (3) (նկ. 6) արտաշարժ բռունցքը,
6. տեղադրեք (2) մատը և ձգեք (1) հեղույսների մանեկները,
7. (7) բարձակի համապատասխան անցքի մեջ տեղադրեք և ամրացրեք հիդրոզլանի (6) (նկ. 7) մատը,
8. կրկնեք նշված գործողությունները կամրջակի հակադիր թևքի վրա,
9. կարգավորեք առջևի անջվների զուգամշտումը,
10. Ձգեք ղեկային ձգածողի (4) մանեկները (նկ. 6):



Նկ. 6.




Նկ. 7.

Բ. Ղեկի վարման հիդրոզլանի տեղակայումը առջևի տանող կամրջակի վրա (նկ. 8)

I անցքի մեջ հիդրոզլանի կոնական մատի տեղադրման դեպքում A_{ձախ} չափը (հեռավորությունը ռեդուկտորի բազային մակաձուլիկի և

կամրջակի ձախ կափարիչի կցաշուրթի միջև) պետք է լինի 273 մմ, II անցքի մեջ մատի տեղադրման դեպքում՝ 313 մմ, III անցքի մեջ մատի տեղադրման դեպքում՝ 358 մմ:

Աջ ռեդուկտորի արտաշարժը ($A_{աջ}$) կատարեք ձախ ռեդուկտորի արտաշարժի չափով ($A_{ձախ}$):



Նկ. 8.

Գործողություններ անվային կոնական ռեդուկտորով կահավորված տանող կամրջակով տրակտորի առջևի անվաղուրի կարգավորման համար


ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Անվաղուրի կարգավորման ժամանակ անհրաժեշտ է հիդրոզլանի հողակապի մատը վերադասավորել բարձակի համապատասխան անցքի մեջ ըստ ստորև բերված աղյուսակի:

Առջևի անիվների աղուրի չափը	Անցքի համարը բարձակի մեջ	A հեռավորությունը, մմ
1430 1730*	I	273
1520 1820*	II	313
1600 1900*	III	358


* Անիվների վերադասավորման դեպքում

Առջևի անիվների աղուրի տեղակայման համար կատարեք.

1. Արգելակեք տրակտորը կանգառային արգելակով: Յետևի անիվների առաջից և հետևից տեղակայեք հենակներ:
2. Տեղակայեք դոմկրատը առջևի կամրջակի ձախ թևքերի տակ և բարձրացրեք մինչև ց անվի գետնից կտրվելը:
3. Ետ քանդեք կարգավորման վիճակի կափարիչի հեղույսները և հանեք կափարիչը:
4. Ետ քանդեք (1) (նկ. 9) մանեկները և հանեք սեպերը:
5. Թուլացրեք ղեկային ձգաձողի խողովակի ծայրերի մանեկների ձգվածքը: Անջատեք ղեկային ձգաձողը դարձի լծակից:
6. Հանեք առջևի կամրջակի ձախ կողմի երիթակը և ապա կառանիչ (2) մատը: Եթե «H» հեռավորությունը ավել է քան 70 մմ-ը, ապա վերադասավորեք կառանիչ (2) մատը, ինչպես ցույց է տրված նկ. 10-ում:
7. Անջատեք (2) (նկ. 11) հիդրոզևանը (1) բարձակից:
8. Բանալիով պտտելով կարգավորման ձախ վիճակը՝ տեղափոխեք կոնական ռեդուկտորի իրանը մինչև պահանջվող $A_{\text{ձախ}}$ չափի ստացումը:
9. Ըստ վերը բերված աղյուսակի տվյալների՝ տեղակայեք (2) (նկ. 11) հիդրոզևանի մատը (1) բարձակի համապատասխան անցքում և ամրացրեք:
10. Տեղակայեք և ամրացրեք սեպերն ու կարգավորման վիճակի կափարիչը:
11. Նկարագրված գործողությունները կատարեք նաև կամրջակի աջ կողմում: Տեղակայեք $A_{\text{աջ}} = A_{\text{ձախ}}$ չափը:
12. Կարգավորեք առջևի անիվների զուգամիտումը:




Նկ. 9.



Նկ. 10.

13. Չգեք ղեկային ձգածողի մանեկները:



ՆԿ. 11.

Գործողություններ անվային պլանետար ռեդուկտորով կահավորված տանող կամրջակով տրակտորի առջևի անվաղուրի կարգավորման համար

Տրակտորի անվաղուրն ըստ առջևի անիվների կարգավորվում է 1420 ...1970 մմ միջակայքում անիվների վերադասավորման և սկավառակների ու անվագոտու փոխադարձ դիրքերի փոփոխման միջոցով:


Անվաղուրի կարգավորման համար՝

1. արգելակեք տրակտորը կանգառային արգելակով: Հետևի անիվների առաջից և հետևից տեղակայեք հենակներ,
2. դմկրատով բարձրացրեք տրակտորի առջևի մասը (կամ հաջորդաբար առջևի անիվները)՝ ապահովելով լուսածերպ անիվների և գետնի միջև,
3. հանեք առջևի անիվները,
4. ետ քանդեք անվագոտու վրա սկավառակը ամրացնող մանեկները:

Աղուրի պահանջվող չափից կախված՝ տեղակայեք անվագոտու և սկավառակի փոխադարձ համապատասխան դիրքը, ինչպես ցույց է տրված նկ. 12-ում:

Այս ընթացքում ուշադիր եղեք, որպեսզի անիվների պտտման ուղղությունը համընկնի անվաղողի կողապատին կատարված սլաքի ուղղության հետ:

Անիվների վերադասավորման դեպքում անվակունդի կցաշուրթի հետ անիվի սկավառակը ամրացնող մանեկները ձգեք 210...260 Նմ, իսկ անվագոտու հետ սկավառակը ամրացնող մանեկները՝ 180...240 Նմ մոմենտով:



Նկ. 12:

Ղեկի վարման հիդրոուժեղարարով կահավորված տրակտորի առջևի անիվների զուգամիտության կարգավորումը

Առջևի անիվների աղուրի կարգավորումից հետո կարգավորեք անիվների զուգամիտումը ղեկային ձգաձողի երկարության փոփոխման միջոցով (նկ. 13):

1. Ապահովեք պահանջվող ճնշումը անվադողերում (տես կետ 8.3-ի երաշխավորումները):
2. Հարթ տեղանքում ուղիղ ուղղությամբ տրակտորը քշելով տեղափոխեք 3 մ-ից ոչ պակաս հեռավորությամբ:
3. Ստուգեք, որպեսզի անվային ռեդուկտորների իրանները (առջևի տանող կամրջակով տրակտորներ) կամ շրջադարձային բունցքները (առջևի տարվող կամրջակով տրակտորներ) կամրջակի իրանից դուրս ձգված լինեն միևնույն «B» չափով:


4. Կամրջակի հետևի մասում չափեր անվագոտիների եզրագծերի երկու ծայրային կետերի միջև «B» հեռավորությունը՝ անհիվների առանցքի բարձրության վրա:

5. Տրակտորը տեղաշարժեք առաջ այնպես, որ առջևի անհիվները պատվեն մոտ 180°-ով, որից հետո կամրջակի առջևի մասում չափեր «A» հեռավորությունը, «B» -ի չափման ժամանակ ընտրված կետերի միջև: Ձուգամիտումը ճիշտ է, եթե «A» չափը 0...8 մմ-ով փոքր է «B» չափից:


Եթե զուգամիտումը չի գտնվում բերված միջակայքում, կատարեք հետևյալը՝

6. Ետ քանդեք ղեկային «2» ձգաձողի խողովակի «1» և «3» մանեկները,
7. խողովակը պատեղով տեղակայեք զուգամիտման պահանջվող չափը,
8. վերջնաձգեք «1» և «3» մանեկները:


Կոնական ռեդուկտորով տանող կամրջակ



Տարվող կամրջակ



Պլանետար ռեդուկտորով տանող կամրջակ




Նկ. 13.

Հետևի անհիվների աղուրի փոփոխման համար (նկ.14)


1. բարձրացրեք տրակտորի հետևի մասը՝ մինչև անհիվների գետնից կտրվելը: Ետ պատեք անվակունդի հետ սկավառակը միացնող (1) մանեկները և հանեք անհիվը,

2. պտտեք անվակունդն այնպես, որ (3) ներդրակը հայտնվի ներքևում,
3. ետ պտտեք անվակունդի հետ ներդրակը միացնող (3) հեղույսներն այնքան, որ ներդրակի ու կիսասառնու ատամները դուրս գան կցումից,
4. տեղափոխեք անվակունդը մինչև պահանջվող աղուրի ստացումը, որից հետո 280...300 Նմ մոմենտով ձգեք ներդրակի (2) հեղույսները; տեղակայեք անիվը և 210...260 Նմ մոմենտով ձգեք անիվի (1) հեղույսները:



Նկ. 14.

Պահանջվող դիրքում տեղակայեք նաև երկրորդ անիվը:



Նկ. 15.

Մինչև 1600 մմ չափի անվաղուրները ստացվում են առանց անիվների վերադասավորման: 1600 մմ-ից մեծ անվաղուրները ստացվում են անիվների վերադասավորմամբ, ինչպես ցույց է տրված նկ. 15-ում:

Աղյուսակ 1

Չետևի անիվների տեղակայումը (15,5R38 անիվների համար)

Չետևի անիվների անվաղուրը, մմ	1350*	1400	1500	1600	1800	1900	2000	2100
Կիսասառնու ճակատի և անվակունդի ճակատի միջև «a» հեռավորությունը, մմ	անաստիճանավոր՝ առանց անիվների վերադասավորման				անաստիճանավոր՝ անիվների վերադասավորմամբ			
	125	100	50	0	164	114	64	14

8.3. ՊՆՆՄԱՏԻԿ ԴՈՂԵՐԻ ՀԱԽԱԳՈՐԾՈՒՄ

Կատարեք պննմատիկ դողերի շահագործման հետևյալ հիմնական պահանջները՝

1. ճշգրտորեն պահպանեք դողերում օդի ճնշման երաշխավորվող նորմերը (աղյուսակ 2),

Աղյուսակ 2:

Դողի նշանակումը	Բեռնվածությունը մեկ անվի վրա (Ն) և դրան համապատասխան օդի ճնշումը (ՄՊա)				
	0,1	0,11	0,14	0,17	0,25
15,5R38	14550	15450	17750	19800	-
9,5-42	-	-	9700	10800	-
18,4L-30	-	21000	24300	-	-
9-20	6200	6500	7600	8450	10650
11,2-16	-	7050	7950	8850	10500 (0,22)
11,2-20	7650	8100	9300	10400	11750 (0,21)
16,9R30	17000	18000	21000	-	23000 (0,16)
16-20	11250	12850	14300	17500	-
18,4R34	21250	23500	25900	-	-
13,6-20	7650	8550 (0,12)	9300 (0,14)	10750 (0,18)	11450 (0,20)
16,9R38	17550	-	23800	25750 (0,16)	-

2. թույլ մի տվեք տրակտորի աշխատանքը անիվների զգալի տեղապտույտով, խստորեն պահպանեք առջևի տանող կամրջակով

տրակտորի առջևի և հետևի անիվների զուգակցման տարբերակների պահանջները (աղյուսակներ 3ա, 3բ):

Աղյուսակ 3ա:

Չեժանային առջևի տանող կամրջակով USQ-82.2 տրակտորի առջևի և հետևի անիվների զուգակցման տարբերակներ


Չետևի անվադողեր	Առջևի անվադողեր		
	360/70R24	13,6-20	11,2R24
18,4R34	+	-	-
15,5R38	+	-	-
16,9R30	-	+	-
9,5-42	-	-	+
+ զուգակցվում են, - չեն զուգակցվում			

Աղյուսակ 3բ

Դարպասային առջևի տանող կամրջակով «Беларус-82.1» տրակտորի առջևի և հետևի անիվների զուգակցման տարբերակներ

Չետևի անիվներ	Առջևի անիվներ					
	8,3-20	11,2-20 (11,2R20)	13,6-20	360/70R20	13,6R20	16,0-20
18,4L-30	+	+	-	-	-	-
18,4R34	-	+	-	-	-	-
15,5R38	+	+	-	-	-	-
16,9R38	-	-	+	+	+	-
9,5-42	+	+	-	-	-	-
11,2R42	+	+	-	-	-	-
+ զուգակցվում են, - չեն զուգակցվում						

3. Անվադողի պահպանաշերտի անհավասարաչափ մաշի դեպքում պարբերաբար վերադասավորեք անվադողերը աջ կողմից ձախ և հակառակը:
4. Պահպանեք դողերի մոնտաժման և ապամոնտաժման կանոնները:
5. Պահպանեք դողերը վառելանյութի, քսանյութերի և ուրիշ նավթամթերքների ազդեցությունից:
6. Ամեն օր զննեք անվադողերը, մաքրեք դրանք պահպանաշերտում լրված առարկաներից:
7. Չաշխատացնել և չկայանել տրակտորը վնասված և թողած դողերով:
8. Պահպանեք տրակտորը վարելու կանոնները:
9. Աշխատանքի երկարաժամկետ ընդմիջումների ժամանակ տրակտորը տեղադրեք տակդիրների վրա այնպես, որ բոլոր անիվները կտրվեն գետնից:
10. Դողերի փչումն իրականացրեք ճնշման (1) (նկ. 16) կարգավորիչի օդիեռացուցիչ փականից՝ կատարելով հետևյալ գործողությունները՝
 - կոնդենսատի հեռացման փականով բաց թողեք օդը (3) բալոնից,
 - հանեք (2) ունկամանեկը օդիեռացուցիչ փականի խողովակապտուկից,
 - ճկափողը միացրեք օդիեռացուցիչ փականի խողովակապտուկին և անվադողի օդի խցիկի վենտիլին,
 - միացրեք օդամղիչը և փչեք անվադողը մինչև երաշխավորվող ճնշումը՝ վերջինս հսկելով անվային մանոմետրով, անջատեք ճկափողը օդիեռացուցիչ փականի խողովակապտուկից և անվադողի օդի խցիկի վենտիլից,
 - անջատեք օդամղիչը և փակեք օդիեռացուցիչ փականի խողովակապտուկը ունկամանեկով:



Նկ. 16.

8.4. Կշռային սահմանափակումներ

Ուժային փոխանցման հուսալիության օպտիմալ ցուցանիշների և արդյունավետ քարշային հատկությունների ստացման համար տրակտորի առավելագույն բալաստավորված զանգվածը (բազային

տրակտորը բալաստի և կախովի սարքավորումների հետ) չպետք է գերազանցի 7000 կգ-ը՝ 1600 մմ առջևի և հետևի անվաղուրների դեպքում:

Հետևի կամրջակի առավելագույն բեռնվածությունը (բալաստի և կախված սարքավորումների հետ) չպետք է գերազանցի 5000 կգ-ը:


Առջևի կամրջակի վրա առավելագույն բեռնվածությունը չպետք է ավել լինի անվաղողերի բեռնունակությունից և չպետք է գերազանցի 1750 կգ-ը:

1800 մմ-ից ավելի անվաղուրի տեղակայման դեպքում աղուրի յուրաքանչյուր 100 մմ ավելացման ժամանակ բեռնվածությունները կամրջակների վրա պետք է իջեցվեն 5 %-ի չափով:

8.5. Տրակտորի վրա գյուղատնտեսական մեքենաների կախումը: Կախոցային սարքի կարգավորումը աշխատանքային և տրանսպորտային դիրքերի համար

Տրակտորի վրա մեքենաների կախումն իրականացրեք ՍԱ-1 ավտոմատ կցիչի կիրառմամբ, որը կախոցային սարքի հետ միանում է երեք կետերում (երկու երկայնական ձգաձողերի հետին հողակապերը և կենտրոնական ձգաձողի հետին հողակապը):

Տրակտորից մեքենայի պատահական ինքնաբերական անջատումը կանխելու նպատակով ավտոմատ կցիչի կողպեքի շնիկը սևեռեք զսպանակային երիթակով: Համոզվեք, որ տրանսպորտային դիրք մեքենայի բարձրացման դեպքում ապահովվում է 70 մմ-ից ոչ պակաս չափով բացակ կարդանային լիսեռի և լայնադրակի միջև:



Նկ. 17.

Տրակտորի հետ կիսակախովի մեքենաների միացումը իրականացրեք մեքենայի հետ մատակարարվող և երկայնական ձգաձողերի հողակապերով տրակտորի հետ միացվող հատուկ լայնադրակի կիրառմամբ:

Վերհանման բարձրության սահմանափակումը իրականացրեք շարժական (1) հենակի (Նկ. 17) կիրառմամբ, որը կախոցի բարձրացման

ժամանակ ազդում է հիդրոմեխանիկական փականի (2) վրա, որն էլ, իր հերթին, փակում է հիդրոգլանի մխոցակոթային խոռոչը:


Մեքենայի կախումից հետո, աջ շեղմույթի և կենտրոնական ձգածողի երկարությունների փոփոխմամբ իրականացրեք մեքենայի հորիզոնական դիրքում տեղակայումը: **Կախվի գործիքներով աշխատելըս ծախ շեղմույթը մի կարգավորեք**, դրա երկարությունը պետք է լինի անփոփոխ և հավասար 475 մմ-ի: Կախված մեքենայի դիրքից՝ վերջնական կարգավորումն ու տեղակայումը իրականացրեք դաշտում (վարի դեպքում երրորդ ակոսի անցման ժամանակ, մյուս աշխատանքների դեպքում՝ առաջին անցման ժամանակ):

Կցված գյուղատնտեսական մեքենայով տրակտորի հեռավոր փոխադրումների պատրաստման ժամանակ ագրեգատի անցանելիության բարելավման համար կարճացրեք կենտրոնական (24) (նկ. 18) ձգածողը:

(6) կալունակների մեջ ներպտոված են կարգավորման (8) հեղույսները, որոնք ապահովում են շղթաների անհրաժեշտ ձգվածությունը տրանսպորտային դիրք գյուղգործիքի բարձրացման ժամանակ դրա լայնական ուղղությամբ ճոճի կրճատման նպատակով:

(8) հեղույսների կարգավորումը կատարեք հետևյալ հաջորդականությամբ՝

1. միացրեք գործիքը կախոցին դրա երկայնական ու կենտրոնական հողակապերի միջոցով: Մինչև վերջ կալունակի մեջ ներպտեք կարգավորման (8) հեղույսները,
2. կախոցի կիրառմամբ բարձրացրեք գործիքն այնքան, որ դրա բանոդ օրգանները գետնից կտրվեն,
3. կարգավորեք սահմանափակող շղթաների երկարությունը առձգիչների պտտմամբ այնպես, որպեսզի ապահովվի երկայնական ձգածողերի հողակապերի ճոճի ազատությունը՝ գործիքի շահագործման ուղեցույցի հրահանգներին համապատասխան: Կախվի գութանների համար հորիզոնական հարթության մեջ ճոճի ամպլիտուդը պետք է լինի 125 մմ,
4. կարգավորեք աջ շեղմույթի երկարությունն ըստ վարի պահանջվող խորության,
5. բարձրացրեք գյուղգործիքը տրանսպորտային դիրք: Ետ պտտելով կարգավորման (8) հեղույսները՝ փոխեք շղթաների ձգվածությունն այնպես, որ դրանք աննշան չափով կախ ընկնեն ապահովելով



Նկ. 18: Հետևի կախման սարք:

1,26-երկայնական ձգաձողեր, 2-բլթանցք, 3-առձգիչ, 4,28-երկայնական ձգաձողերի առջևի հատված, 5-ձախ շեղմույթի եղանիկ, 6-կալունակ, 7- երկայնական ձգաձողերի սունի, 8-կարգավորման հեղույս, 9-շեղմույթի առձգիչ, 10-շեղմույթի վերին պտուտակ, 11,16-արտաքին բազուկներ, 12-դարձման բարձակ, 13-դարձման լիսեռ, 14-դարձման բազուկ, 15 կենտրոնական ձգաձողի բարձակի զսպանակ, 17-աջ շեղմույթ, 18-լիսեռիկ, 19-շեղմույթի տարվող ատամնանիվ, 20-շեղմույթի տանող ատամնանիվ, 21-շեղմույթի բռնակ, 22-խողովակ, 23-աջ շեղմույթի եղանիկ, 24-կենտրոնական ձգաձող, 25-բռնակ, 27-սահմանափակիչ շղթա, 29-մանեկ, 30-գինդ, 31-մատ, 32-լայնադրակ, 33-սունացից, կցման եղանիկ, 35-մատներ:

գործիքի ճոճը միջին դիրքից յուրաքանչյուր կողմ 20 մմ-ից ոչ ավել չափով,

6. հուսալիորեն ամրացրեք (8) հեղույսները հակամանեկներով:

Աջ շեղնույթի երկարության յուրաքանչյուր փոփոխությունը պետք է ուղեկցվի աջ կալունակի հեղույսի կարգավորմամբ՝ սահմանափակող շղթաների ինքնաբլոկավորման ապահովման միտումով:


Միջշարային մշակումների, ցանքի, ինչպես նաև ՏՄՈՒ-1ժ քարշակցանքային սարքի կիրառմամբ աշխատանքների ժամանակ կախոցային սարքի երկայնական ձգածողերը ամբողջությամբ բլոկավորեք լայնական ուղղությամբ տեղաշարժերից՝ գործիքի ճոճի պատճառով մշակաբույսերի վնասման կանխարգելման նպատակով:

Բլոկավորումն իրականացրեք առկա կարգավորումների սահմաններում սահմանափակող շղթաների երկարության համարավորին կարճացմամբ: Այս դեպքում կարգավորման (8) հեղույսները ներպտտեք կալունակի մեջ մինչև վերջ:

Կարգավորումների նշված կարգի խախտումը կարող է բերել սահմանափակող շղթաների կտրման կամ ուրիշ կտտրումների: Ինքնաբերական իջեցումից խուսափելու համար մեքենայի հետ ագրեգատավորված կախոցային սարքը բլոկավորեք տրանսպորտային դիրքում, ինչի համար՝

ա) Տրակտորիստի փոքրաչափ խցիկով տրակտորի դեպքում՝

1. բացեք խցիկի հետին պատուհանը,
2. բարձրացրեք կախոցային սարքը վերին ծայրային դիրք՝ տեղադրելով հիդրոբաժանարարի բռնակը «բարձրացում» դիրքում,
3. հիդրոզլանի հիդրոմեխանիկական (10) (նկ. 19) փականը մխոցակոթի վրա պետք է գտնվի հիդրոզլանի հետին ծայրային դիրքում,



Նկ. 19: Տրակտորիստի փոքրաչափ խցիկով տրակտորի կախման սարքի սևեռակող մեխանիզմը:

1-կալիչ, 2,3-ձգածողեր, 4-հիդրոզլանի բարձակ, 5-սռնի, 6,7-բազուկներ, 8-բարձակ, 9-զսպանակ, 10-հենակ, 11-ղեկավարման ձգածող, 12-դարձման բազուկ, 13-ղեկավարման բռնակ:

4. իջեցրեք (13) բռնակը, իսկ դրա հետ նաև սևեռող մեխանիզմը՝ ստորին դիրք,
5. հիդրոբաժանարարի բռնակը տեղակայեք «լողացող» դիրքում: Կախված գործիքի ծանրության ազդեցությամբ դարձման (12) բազուկը կպտտվի և սևեռիչի ատամը կմտնի կոնտակտի մեջ (1) կալիչի հետ:
Կախոցի ապաբլոկավորման համար՝
1. կախման սարքը բարձրացրեք վերին ծայրային դիրք,
2. (13) բռնակը տեղափոխեք վերին դիրք:

բ) Տրակտորիստի ունիֆիկացված խցիկով տրակտորի դեպքում
 կախոցի բլոկավորումն ու ապաբլոկավորումը՝ համանմանորեն: Այս դեպքում կախոցի բարձրացումն ու իջեցումը իրականացրեք ուժային կարգավորիչի բռնակով (առանց ուժային կարգավորիչի տրակտորի դեպքում՝ հիդրոբաժանարարի աջ լծակի կիրառմամբ), իսկ սևեռող մեխանիզմի բարձրացումն ու իջեցումը՝ ղեկավարման բռնակի համապատասխանաբար աջ կամ ձախ ծայրային դիրքեր տեղափոխմամբ:

8.6. Հիդրոհամակարգի և կախման սարքի ղեկավարումը հիդրոբաժանարարի կիրառմամբ

Առանց ուժային կարգավորիչի տրակտորների կախման սարքի ղեկավարումն իրականացվում է հիդրոբաժանարարի աջ ծայրային լծակի կիրառմամբ:

Հենարանային անիվներ ունեցող կախովի մեքենաների հետ աշխատելիս հիդրոբաժանարարի լծակը տեղակայեք միայն «բարձրացում» և «լողացող» դիրքերում:

ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Արգելվում է հողի մշակման կախովի մեքենաների հետ աշխատելիս հիդրոբաշխիչի լծակը տեղակայել «լողացող» դիրքում:

8.7. Կախման սարքի ղեկավարումը ուժային (դիրքային) կարգավորիչի կիրառմամբ

8.7.1. Ուժային կարգավորում

Կարգավորման ուժային մեթոդի կիրառումը ապահովում է արտադրողականության առավելագույն ավելացում էներգատար գյուղատնտեսական աշխատանքների (վարի, խորը փխրեցման, կախովի

գյուղատնտեսական մեքենաների հետ ագրեգատավորված կուլտիվացման) իրականացման ժամանակ:


ՊՆ-3-35, ՊԼՆ-3-35 գութաններով վարի ժամանակ գութանի հենարանային անիվը բարձրացրեք վերին ծայրագույն դիրք:

Ոչ մեծ խորությամբ (20-23 սմ) վարի իրականացման ժամանակ, երբ հողի խտությունն ըստ գոնի երկարության փոփոխվում է զգալի միջակայքերում (ավազ-կավ), իջեցրեք գութանի հենարանային անիվը, որպեսզի սահմանափակվի վարի առավելագույն խորությունը հողի փոքր խտությամբ տեղամասերում:

Ընդգրկման լայնության փոփոխման հարթության մեջ երկու հենարանային անիվներ ունեցող գյուղատնտեսական մեքենաների հետ ագրեգատավորված տրակտորով համատարած կուլտիվացիա կան խորը փխրեցում կատարելիս, հենարանային անիվները տեղակայեք պահանջվող բարձրության դիրքում, որպեսզի բացառվեն գյուղատնտեսական մեքենայի լայնական շեղումները և ծայրային աշխատանքային օրգանների անհավասարաչափ բեռնավորումները:

Կարգավորման ուժային մեթոդի կիրառման դեպքում ագրեգատի աշխատանքի նախապատրաստման համար կատարեք հետևյալը՝

1. կախման սարքի կենտրոնական ձգածողը տեղակայեք (30) (նկ. 18) գինդի վերին անցքի վրա,
2. միացրեք կախովի գյուղմեքենան տրակտորի կախման սարքի հետ,
3. միացրեք կարգավորման ուժային մեթոդը՝ բարձրացրեք կախովի մեքենան հողի մակերևույթից և (1) (նկ. 20) փոխարկիչը շրջելով ձախ (ըստ տրակտորի ընթացքի)՝ մտցրեք



Նկ. 20: Ուժային (դիրքային) կարգավորիչի կարգավորման եղանակների փոխարկումը:

1-կարգավորման եղանակների փոխարկման բռնակ, 2-կարգավորող ծորակի դարձանիվ, 3-ուժային կարգավորման լծակ, 4-դիրքային կարգավորման լծակ:

Բռնակի դիրքերը՝ N-չեզոք; I-դիրքային կարգավորում, II-ուժային կարգավորում:

փոխարկիչը շրջելով ձախ (ըստ ուժային (3) լծակի փորակի մեջ:

Յեշտ միացում կատարելու համար նախքան փորակի մեջ մտցնելը՝ փոխարկիչը տեղափոխեք առաջ (ըստ տրակտորի ընթացքի) մինչև (3) լծակի փորակի հետ համատեղումը,

4. մեծ ընդգրկման լայնությամբ մեքենաների դեպքում կարգավորումը իրականացրեք ըստ հենարանային անիվների և աշխատանքային օրգանների բարձրության: Գութանի հետ ազդեգատավորման դեպքում հենարանային անիվը բարձրացրեք վերին սահմանային դիրք:


Աշխատանքի կանոններն ու ձևերը

Գոնի սկզբում իջեցրեք կախովի գործիքը՝ ըստ (3) սեկտորի (նկ. 21) շրջելով (1) բռնակը: Որքան առաջ է տեղակայվում բռնակը, այնքան ավելի խոր է իրականանում հողի մշակումը: Հողի մշակման պահանջվող խորության կարգավորումից հետո (2) սահմանափակիչը կառավարակետի ակոսով կիպ մոտեցրեք բռնակին և սևեռեք:

Գոնի վերջում գյուղգործիքը հողից հանելու համար (1) բռնակը տեղակայեք «բարձրացում» դիրքում: Բարձրացման ավարտից հետո բռնակը պետք է ինքնաբերաբար վերադառնա «տրանսպորտային չեզոք» դիրք:

Յուրաքանչյուր հաջորդ գոնի սկզբում գյուղգործիքի իջեցումը իրականացրեք (1) բռնակը ըստ (3) սեկտորի մինչև (2) հենակ-սահմանափակիչը շրջելով:

Գոնի վերջում գյուղգործիքը հողից հանելու համար (1) բռնակը տեղակայեք «բարձրացում» դիրքում: Բարձրացման ավարտից հետո բռնակը պետք է ինքնաբերաբար



Նկ. 21: Տրակտորիստի ունիֆիկացված խցիկով տրակտորի ուժային (դիրքային) կարգավորիչի դեկավարումը.

1-բռնակ, 2-հենակ-սահմանափակիչ, 3-սեկտոր, 4-հողլվակ, 5-զըսպանակ, 6-ձգաձող:

վերադառնա «տրանսպորտային չեզոք» դիրք (մինչև սեկտոր 3-ի վրա 4 հոլովակի հենումը):

Շահագործման առանձնահատկությունները

Վարի կատարման ժամանակ, եթե փաստացիորեն ստացվող առավելագույն խորությունը փոքր է պահանջվողից, կախման սարքի կենտրոնական ձգածողը վերադիրքավորեք գինդի միջին անցքի մեջ:

Ըստ գոնի երկարության կամ ըստ ընդգրկման լայնության փոփոխական խտության հողերի վրա համատարած կուլտիվացիա կամ խորը փխրեցում իրականացնելիս այն դեպքում, երբ աշխատանքը ուղեկցվում է կուլտիվատորի դիրքի մեծ թվով ավտոմատ ճշտումներով, կենտրոնական ձգածողը նույնպես վերադասավորեք, վերադիրքավորեք գինդի միջին անցքի մեջ:

Կարգավորման ուժային մեթոդով աշխատելիս ինչպես վարի, այնպես էլ կուլտիվացիայի իրականացման ժամանակ կատարեք ճշտումների արագության դարձանիվի (2) (նկ. 20) համալարում: Ժամսլաքի ուղղությամբ դարձանիվի պտտումը բերում է ճշտումների արագության փոքրացման, իսկ ժամսլաքի հակառակ ուղղությամբ պտտումը՝ ճշտումների արագության մեծացման:

Դարձանիվի համալարումը կատարեք գութանի (կուլտիվատորի) կարգավորումներից հետո, ընդ որում, դարձանիվի պտտմամբ խորության ավտոմատ կարգավորման ցանկալի սահունությանը հասնելու ազդեցատի աշխատանքի ընթացքում:

Մի պտտեք դարձանիվը ժամսլաքի ուղղությամբ մինչև վերջ, քանի որ դա կբերի գյուղմեքենայի անչափ դանդաղ բարձրացում և տրակտորի տանող անիվների բարձրացված տեղապտույտի պատճառ կդառնա:

Ճշտումների արագության դարձանիվի համալարումը և կենտրոնական ձգածողի տեղադրումը գինդի համապատասխան անցքի մեջ կատարեք յուրաքանչյուր տեսակի գյուղմեքենայի համար՝ հաշվի առնելով կոնկրետ հողային պայմանները: Վերահամալարումներ աշխատանքի ընթացքում չեն պահանջվում:

8.7.2. Դիրքային կարգավորում

Կարգավորման դիրքային եղանակի կիրառման դեպքում հիդրոհամակարգի կարգավորիչը, դրա ղեկավարման բռնակի (1) (նկ. 21) տեղափոխմամբ, ապահովում է տրակտորի իրանի նկատմամբ

գյուղատնտեսական մեքենայի ցանկալի դիրքի տեղակայումը և աշխատանքի ընթացքում այդ դիրքի ավտոմատ պահպանումը:

Կախովի գութաններով, համատարած և միջշարային մշակման, ինչպես նաև խորը փխրեցման կուլտիվատորներով հողի մշակման գյուղմեքենայի դիրքային կարգավորմամբ իրականացումը երաշխավորվում է դաշտի հարթ ռելիեֆի առկայության դեպքում:

Տրակտորի հետ մեծ ընդգրկման լայնությամբ մեքենաների ագրեգատավորման դեպքում դիրքային կարգավորմամբ աշխատելիս անհրաժեշտ է օգտագործել հենարանային անիվները՝ մեքենայի լայնական շեղումները բացառելու, ագրեգատի ուղղության լայնությունը լավարկելու և լայնական ուղղությամբ (տրակտորի շարժման նկատմամբ) ռելիեֆի պատճենահանման լավագույն պայմանների ստեղծման համար:

Ագրեգատը դիրքային կարգավորման եղանակով աշխատանքի նախապատրաստման համար՝

1. միացրեք կախովի մեքենան տրակտորի կախման սարքի հետ,
2. բարձրացրեք կախովի մեքենան վերին (տրանսպորտային) դիրք,
3. միացրեք դիրքային կարգավորման եղանակը, որի համար (1) փոխարկիչը (նկ. 20), շրջելով աջ (ըստ տրակտորի ընթացքի), մտցրեք դիրքային (4) լծակի փորակի մեջ,
4. ճշտումների արագության (2) դարձանիվը պտտեք ժամսլաքի հակառակ ուղղությամբ մինչև վերջ՝ տեղակայելով դիրքի ավտոմատ ճշգրտման ընթացքում բարձրացման առավելագույն արագություն:

Աշխատանքի կանոններն ու ձևերը

Տեղակայեք կախովի գործիքը պահանջվող դիրքում: Իջեցունը իրականացրեք ըստ (3) սեկտորի (նկ. 21)՝ շրջելով (1) բռնակը: Որքան առաջ կտեղակայեք բռնակը, այնքան ավելի ցածր կիջեցվի գործիքը, և հակառակը, ըստ սեկտորի՝ որքան շատ կմոտեցնեք բռնակը դեպի ձեզ, այնքան ավելի կբարձրանա գործիքը:

Ըստ բարձրության պահանջվող դիրքում գործիքի տեղակայումից հետո (2) սահմանափակիչը կառավարակետի ակոսով կիպ մոտեցրեք բռնակին և սևեռեք:

Գոնի վերջում գործիքը տրանսպորտային դիրք բարձրացնելու համար (1) բռնակը մինչև վերջ շրջեք դեպի ձեզ և բաց թողեք: Վերելքի ավարտից հետո բռնակը պետք է ինքնաբերաբար վերադառնա

«տրանսպորտային չեզոք» դիրք (մինչև սեկտոր 3-ի վրա 4 հոլովակի հեռումը):

8.7.3. Բարձրաբերձ կարգավորում

Բարձրաբերձ կարգավորումը կարող է կիրառվել հենարանային անիվներ ունեցող կախովի գործիքների հետ տրակտորի ագրեգատավորման դեպքում: Այն կայանում է նրանում, որ մշակման պահանջվող խորությունն ապահովվում է գյուղգործիքի հենարանային անիվի որոշակի բարձրությամբ տեղակայմամբ:

Բարձրաբերձ կարգավորման դեպքում (1) փոխարկիչը (նկ. 20) տեղակայվում է միջին (N) դիրքում: Գործիքի բարձրացման համար (1) բռնակը (նկ. 21) շրջեք դեպի ձեզ մինչև վերջ և պահեք այդ դիրքում մինչև վերելքի ավարտը, որից հետո ազատ թողնված բռնակը պետք է ինքնաբերաբար վերադառնա «տրանսպորտային նետրալ» դիրք: Իջեցումն իրականացրեք՝ (1) բռնակը կարգավորման գոտի տեղափոխելով (մինչև սեկտոր 3-ի վրա 4 հոլովակի հեռումը): Չի թույլատրվում կախովի գործիքների հետ աշխատելիս (1) բռնակը տեղակայել «հարկադրական իջեցում» դիրքում (առաջ մինչև վերջ):

Բռնակի «հարկադրական իջեցում» դիրքն օգտագործեք միայն կախովի գործիքը տրակտորի կախման սարքի հետ միացնելիս: Չարկադրական իջեցման համար (1) բռնակը տեղադրեք առջևի ծայրագույն դիրք: Բռնակը բաց թողնելուց հետո այն (5) զսպանակի ազդեցությամբ պետք է վերադառնա կարգավորման գոտի, իսկ կախման սարքի իջեցումը պետք է դադարի:


8.8. Ուժային (դիրքային) կարգավորիչի կարգավորումը Ղեկավարման կարգավորիչի կարգավորումը՝

1. հանեք կառավարակետի կողային կափարիչը,
2. կարգավորեք (16) ձգաձողի (նկ. 22) երկարությունն այնպես, որ բռնակի ետ (ըստ տրակտորի ընթացքի) փոխադրումից բռնակի վրայի ռետինե հոլովակի և սեկտորի եզրագծի միջև առաջանա 18 - 24 մմ բացակ (տես նկ. 21):

Դիրքային ձգաձողի կարգավորումը՝

1. (1) փոխարկիչը տեղակայեք միջին դիրքում,
2. բարձրացրեք կախման սարքը վերին սահմանային դիրք,

3. կարգավորեք (4) ձգածողի երկարությունն այնպես, որ (1) փոխարկիչը իր ելուստով ազատ մտնի դիրքային (2) լծակի ակոսի մեջ, որից հետո կարճացրեք (4) ձգածողը կարգավորող (7) մանեկների մեկ պտույտի չափով:



Նկ. 23.

Ուժային տվիչի կարգավորումը`

1. տեղակայեք (1) փոխարկիչը (Նկ. 23) միջին դիրքում,
2. անջատեք կախման սարքի կենտրոնական (10) ձգածողը և դրա (11) մատը տեղադրեք (9) գինդի վերին անցքում,
3. լրացուցիչ (8) լծակով պտտեք գինդը (13) մատի շուրջ «A» սլաքի ուղղությամբ մինչև (15) զսպանակի լրիվ սեղմվելը: Բազուկը բաց թողնելուց հետո գինդը պետք է վերադառնա սկզբնական դիրք, ընդ որում տվիչի քայլը, չափված ըստ (5) ուժային ձգածողի տեղափոխության, պետք է պակաս չլինի 11 մմ-ից,
4. համոզվելով տվիչի սարքինության մեջ` ապաերիթեք թագակերպ (12) մանեկը, ներպտտեք այն մինչև տվիչի զսպանակի սեղմման սկիզբը, որից հետո լրացուցիչ ներպտտեք 1/2 - 1/3 պտույտի չափով և նորից երիթեք:

Ուժային ձգածողի կարգավորումը կատարեք ուժային տվիչի կարգավորումից հետո՝

1. տեղակայեք (1) փոխարկիչը միջին դիրքում (Նկ. 22),
2. լրացուցիչ բազուկի կիրառմամբ գինդը պտտեք ծայրային դիրք («A» սլաքի ուղղությամբ),
3. պահելով գինդը ծայրային դիրքում՝ ստուգեք ուժային (3) բազուկի ակոսի մեջ (1) փոխարկիչի ելուստի ներանցման հնարավորությունը: Եթե ներանցումը չի հաջողվում, ապա կարգավորեք (5) ձգածողի երկարությունն այնպես, որպեսզի (1) փոխարկիչի ելուստը ազատորեն մտնի (3) ուժային բազուկի ակոսի մեջ,
4. կարճացրեք (5) ձգածողը կարգավորող (6) մանեկների մեկ պտույտի չափով:

Տրակտորի վրա կախված գյուղգործիքի դեպքում ուժային ձգածողի կարգավորման համար լրացուցիչ հատուկ բազուկի կիրառման անհրաժեշտություն չկա: Այս դեպքում բավարար է գյուղգործիքը փոքր-ինչ բարձրացնել հենարանի վրայից: Գյուղգործիքի զանգվածն ուժային տվիչի վրա անհրաժեշտ ձգող ճիգը կստեղծվի կենտրոնական ձգածողի միջոցով: Անհրաժեշտ է հիշել, որ այս դեպքում կենտրոնական ձգածողը պետք է տեղակայված լինի գինդի վերին անցքում:

8.9. Հետին հզորության անջատման լիսեռից (ՀԱԼ) հաղորդակի անհրաժեշտություն ունեցող մեքենաների հետ տրակտորի աշխատանքի առանձնահատկությունները

Ընդհանուր հրահանգներ՝


1. մինչև գյուղմեքենան տրակտորի հետ միացնելը հանոզվեք, որ տրակտորի հետին ՀԱԼ-ի ղեկավարման կարգավորումները ճիշտ են կատարված,
2. տեղադրեք և հուսալիորեն սևեռեք ՀԱԼ-ի անհրաժեշտ պոչուկը (8-կամ 21-երիթանի) և միացրեք դրան համապատասխանող պտտման հաճախության հաղորդակը (8-երիթանի պոչուկի դեպքում՝ 540 պտ/րոպ, 21-երիթանի պոչուկի դեպքում՝ 1000 պտ/րոպ):

ՀԱԼ-ի պոչուկի փոխարինման համար կատարեք հետևյալը. ետ պտտեք չորս մանեկները, հանեք պահպանիչ պատյանն ու հենասալը, ետ պտտեք սևեռակայման թիթեղն ամրացնող (1) (Նկ. 23) հեղույսները, հանեք սևեռակայման թիթեղը և դուրս քաշեք (2) պոչուկը, տեղադրեք մյուս պոչուկը ներտաշ անցքի մեջ և սևեռեք այն սևեռակայման թիթեղով,

ներպատեք (1) հեղույսները, տեղադրեք պահպանիչ պատյանը, հենասալը և ամրացրեք դրանք մանեկներով:

ՉԱԼ-ի անկախ (независимый) հաղորդակը միացրեք հանգած կամ նվազագույն պտուտաթվերով աշխատող դիզելի դեպքում:

ՉԱԼ-ի համաժամանակյա (синхронный) հաղորդակի միացումն իրականացրեք աշխատող դիզելի դեպքում՝ կցորդման ազույցի սահուն միացմանը զուգընթաց:




Նկ. 23.

Առանց ՉԱԼ-ի օգտագործման տրակտորի աշխատանքի ժամանակ ՉԱԼ-ի ղեկավարման լծակը պետք է տեղակայված լինի «ՉԱԼ-ն անջատված է» դիրքում, ՉԱԼ-ի արագությունների փոխարկման ազույցի լծակը՝ 1 դիրքում (540 պտ/րոպ), իսկ անկախ կամ համաժամանակյա հաղորդակի փոխարկման լծակը՝ միջին (չեզոք) դիրքում:

3. սովորույթով յուղեք կարդանային փոխանցման լիսեռն ու փոխագուցավոր միացման խողովակը: Տեղակայեք կարդանային փոխանցման հողակապը ՉԱԼ-ի պոչուկի վրա, հուսալիորեն այն ամրացրեք սևեռող առվակի մեջ: Համոզվեք, որ միջանկյալ (փոխագուցավոր) լիսեռի հողակապերի (1) (նկ. 24) եղանիկների (2) ունկերը զետեղված լինեն մեկ հարթության մեջ: Այս պահանջի չկատարումը բերում է կարդանային փոխանցման և ՉԱԼ-ի գերբեռնավորումների,

Տրակտորի ՉԱԼ-ի պոչուկ




Նկ. 24.

4. տեղադրեք գյուղմեքենայի կարդանային լիսեռի պատյանը,
 5. կարդանային փոխանցման միացումից հետո համոզվեք, որ տրակտորի նկատմամբ գյուղմեքենայի ծայրային դիրքերում կարդանային լիսեռի փոխագուցավոր միացության մեքենամասերի

միջև՝ առանցքային ուղղությամբ, առկա է որոշակի բացակ, կարդանային փոխանցման փոխազուցավոր միացության մեքենամասերի նվազագույն վերածածկը պետք է կազմի 110-120 մմ, քանի որ ավելի փոքր վերածածկի դեպքում հնարավոր է դրանց անջատում:

Գյուղմեքենայի ապահովիչ ագույցի (1) (նկ. 25) զսպանակի երկարությունը պետք է կարգավորված լինի այնպես, որ գերբեռնավորումների ժամանակ (2) և (3) բռունցքավոր կիսաազույցները հնարավորություն ունենան պտտվելու մեկը մյուսի նկատմամբ: Ջսպանակի չափից ավելի սեղմումը բերում է ագույցի աշխատունակության կորստի, ինչն էլ կարող է կարդանային լիսեռի և ՅԱԼ-ի գերբեռնավորման պատճառ հանդիսանալ:



Նկ. 25.

6. ՅԱԼ-ը միացրեք և անջատեք սահուն կերպով, առանց բլեթով, դիզելի ցածր պտուտաթվերի պայմանում,
7. մինչև մեքենայի գործադրումը ստուգեք դրա աշխատունակությունը դիզելի նվազագույն ու առավելագույն պտուտաթվերի պայմաններում:

ՅԱԼ-ի միացված համաժամանակյա հաղորդակի դեպքում տրակտորի շարժումը թույլատրվում է 8 կմ/ժ-ից ոչ ավել արագությամբ:

8. անջատեք ՅԱԼ-ի հաղորդակը ագրեգատի դարձերի ժամանակ կցովի մեքենաներով աշխատելիս, իսկ կախովի և կիսակախովի մեքենաներով աշխատելիս՝ գյուղմեքենան տրանսպորտային դիրք բարձրացնելիս,
9. տրակտորից գյուղմեքենայի անջատումից հետո պարտադիր կերպով հանեք կարդանային փոխանցման հողակապը ՅԱԼ-ի պոչուկի վրայից:
Յողի մշակման ռոտացիոն մեքենաներով աշխատելիս՝
10. մի միացրեք ՅԱԼ-ի հաղորդակը հողի վրա իջեցված մեքենայի պարագայում,
11. պտտվող աշխատանքային օրգաններով մեքենայի իջեցումն իրականացրեք սահուն կերպով և տրակտորի շարժման ընթացքում,

12. մի միացրեք ՀԱԼ-ի հաղորդակը, եթե կարդանային փոխանցման հոդակապերից թեկուզ մեկուն առանցքների շեղումը գերազանցում է 35⁰-ը,
13. կոշտ հողերի վրա աշխատանքի ժամանակ նախ իրականացրեք լայնական գոտու մշակում՝ գոն մուտք գործելու համար, և միայն դրանից հետո դաշտը մշակեք երկայնական ուղղությամբ:

8.10. Կցորդների և կցվող մեքենաների հետ աշխատանքը

Միասունի մեքենաները կցվում են տրակտորի հետ ՏՍՈՒ-2-ի (հիդրոճարմանը) միջոցով, կցովիները՝ ՏՍՈՒ-34-ի միջոցով (ավտոմատ կցիչով քարշարկման սարք): Մեքենաների փոխադրումը ՏՍՈՒ-1Ժ-ի միջոցով (լայնադրակ) թույլատրվում է իրականացնել մինչև 15 կմ/ժ արագությամբ միայն գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ և չի երաշխավորվում դրա օգտագործումը ընդհանուր մշանակության ճանապարհների վրա:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Տրակտորի հետ կցորդների պնևմոհամակարգի միացման ժամանակ արգելակել տրակտորը կայանման արգելակով՝ միացման խողովակաշարում ճնշման իջեցման (զրոյացման) համար:

Միասունի կցովի մեքենաների հետ աշխատելիս տրակտորի առջևի կամրջակի հավելաբեռնավորման համար տեղադրեք լրացուցիչ բեռներ առջևի կամրջակի վրա:

Երկսունի կցորդները տրակտորի հետ կցվում են ՏՍՈՒ-34 սարքի միջոցով (չի թույլատրվում դրանց կցումն իրականացնել ՏՍՈՒ-1Ժ սարքի եղանակի միջոցով): Տրակտորի հետ կցորդի կցումից հետո համոզվեք, որ կցորդի առջևի սննին սևեռող սևեռիչն ամբողջությամբ դուրս է հանված կցորդի թափքի իրանի միջից: Կցումից հետո կցորդը տրակտորի հետ միացրեք ապահովական շղթայով (ճուպանով):

Տրակտորի վրա քարշարկման սարքի առկայության դեպքում արգելվում է տրակտորին միացնել կիսակցորդներ (միասունի կցորդներ), ինչպես նաև ոչ ստանդարտ կցորդման առեղ ունեցող երկսունի կցորդներ:

Խստիվ արգելվում է օգտվել կախցից տրակտորի վրա քարշարկման սարքի առկայության դեպքում:

20 և 45 մ³ թափքի տարողությամբ 2ՊՏՍ-4-887Ա կցորդներով թույլատրվում է աշխատել մինչև 15 կմ/ժ արագությամբ՝ դրանց ցածր կայունության պատճառով: Հետևի անիվների թևերի վնասումը կանխելու

նպատակով խուսափեք կտրուկ շրջադարձերից նշված կցորդներով և 1ՌՄԳ-4 ցրիչով աշխատելիս:

Աշխատանքի ժամանակ ՏՍՈՒ-1Ժ սարքի եղանակը լայնադրակի վրա պետք է ամրացված լինի երկու ցցածողերով: Մեկ ցցածողով ամրացված եղանակով աշխատանքն արգելվում է:

Աշխատանքից առաջ համոզվեք, որ կցասարքի եղանակի ցցածողերն ու սոնացիցը հուսալիորեն երիթակված են: Կցորդների բոլոր ազդանշանային սարքերը (կանգառ-ազդանշան, դարձի ցուցիչներ, համարանիշի լուսավորում) միացրեք տրակտորի վրա տեղակայված խրոցակի վարդակից:

Կցորդների պնևմատիկ կամ հիդրավլիկական արգելակների հաղորդակների ղեկավարումն իրականացրեք տրակտորի պնևմոհամակարգի օգնությամբ:

8.11. Հսկողությունը տրակտորի աշխատանքի ժամանակ

Տրակտորի աշխատանքի ժամանակ.

1. հետևել ազդանշանային սարքերի ցուցումներին: Չի թույլատրվում տրակտորն աշխատեցնել անսարք հսկիչ-ազդանշանային սարքերի, այդ թվում նաև զուների պարագայում,
2. եթե դիզելի ծնկավոր լիսեռի պտտման հաճախությունն ավելանում է չափից ավելի (դիզելը գնում է «գերավազքի»), անմիջապես դադարեցրեք վառելանյութի մատուցումը և միաժամանակ դեպի ձեզ քաշեք դիզելի վթարային կանգառի կոճակը,
3. թույլ մի տվեք դիզելի աշխատանքը ծխով և ծնկավոր լիսեռի պտտման հաճախության զգալի անկում գերբեռնվածություններից,
4. մի աշխատացրեք տրակտորը կցորդման ագույցի տեղապտույտի պայմաններում,
5. բարձր բեռնվածությունների դեպքում տրակտորի տեղից պոկումն իրականացրեք հնարավորինս սահուն,
6. արգելքները հաղթահարեք առաջին կամ երկրորդ փոխանցմամբ՝ ծնկավոր լիսեռի ցածր պտուտաթվերի պայմաններում,
7. ստուգեք օդի ճնշումը դողերում: Համոզվեք, որ չկան հովացնող հեղուկի, յուղի, վառելանյութի, էլեկտրոլիտի արտահոսումներ,
8. արգելակների աշխատանքը և ղեկանիվի ազատ ընթացքը ստուգեք աշխատող դիզելի պայմաններում,

9. նշտապես մաքրեք տրակտորը փոշուց և աղտոտիչներից, ստուգեք տրակտորի հանգույցների և մեխանիզմների արտաքին ամրակապումների հուսալիությունը: Հատուկ ուշադրություն դարձրեք տրակտորի ուժային հանգույցների ամրակների պրկման վրա: